ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

29 մայիսի 2015 թվականի **թիվ 5** քաղ. Բուրաբայ

2014 թվականին ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման եւ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության բյուջեների միջեւ բաշխման վերաբերյալ հաշվետվության մասին

Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ արձանագրության 54-րդ կետի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 5 հավելված), «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի 43-րդ կետի 4-րդ ենթակետի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) հիման վրա, ընդունելով ի գիտություն 2014 թվականին ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության ու Ռուսաստանի Դաշնության բյուջեների միջեւ բաշխելու վերաբերյալ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեղեկությունները, Եվրասիական միջկառավարական խորհուրդը **որոշեց.**

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիային՝ իրականացնել

«Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրության իրագործման դիտանցում («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 5 հավելված):

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**